

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼ-  
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ  
ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԶԵՎԱԹՈՒՂԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 նոյեմբերի 2007 թվականի N 1288-Ն

ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ  
ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ  
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԶԵՎԱԹՈՒՂԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել՝

1) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի մշակման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի կազմման ձևաթուղթը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական կարիքների գնահատման կարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Ս. Սարգսյան

2007 թ. նոյեմբերի 16

Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2007 թվականի  
նոյեմբերի 8-ի N 1288-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

# ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների (այսուհետ՝ երեխա) իրավունքների պաշտպանության և սոցիալ-հոգեբանական վերականգնման ու զարգացման նպատակով սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) կազմում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները և երեխաների խնամք ու պաշտպանություն իրականացնող հաստատությունները:

## II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

2. Ծրագիրը կազմվում է երեխայի ուսումնասիրման և սոցիալական կարիքների գնահատման արդյունքների հիման վրա:

3. Երեխայի կարիքների գնահատման հիման վրա համապատասխան մասնագետների կողմից կազմվում է ծրագիրը, որը ներառում է մի շարք վերականգնողական միջոցառումներ և ծառայություններ՝ ուղղված՝

- 1) երեխայի առողջության վերականգնմանը և զարգացմանը.
- 2) երեխայի հոգեբանական վերականգնմանը և զարգացմանը.
- 3) երեխայի սոցիալ-կենցաղային հարմարեցմանը, սոցիալական վերականգնմանը և զարգացմանը.
- 4) երեխայի կրթադաստիարակչական գործընթացի իրականացմանը.
- 5) ընտանիքում երեխայի ունեցած միջանձնային խնդիրների լուծմանը:

## III. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

4. Ծրագրի արդյունքը երեխայի բժշկասոցիալական, հոգեբանական վերականգնումն ու հասարակությանը նրա ինտեգրումն է:

5. Ծրագիրն ըստ անհրաժեշտության ենթակա է փոփոխության:

6. Ծրագիրը վերանայվում է յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ, իսկ հատուկ կարիքներ ունեցող երեխաների դեպքում՝ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ:

7. Ծրագրի իրականացումը վերահսկվում է ծրագիրը կազմող կազմակերպության կամ մարմնի ղեկավարի կողմից:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2007 թվականի  
սեպտեմբերի 8-ի N 1288-Ն որոշման

**Ձ Ե Վ Ա Թ ՈՒ Ղ Թ**

**ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ**

Երեխայի հաշվառման համարը \_\_\_\_\_  
Հաշվառման ամսաթիվը \_\_\_\_\_

1. Երեխայի ազգանունը, անունը, հայրանունը \_\_\_\_\_  
2. Ծննդյան ամսաթիվը \_\_\_\_\_  
3. Երեխայի անձնագրի կամ ծննդյան վկայանի համարը, տալու ամսաթիվը \_\_\_\_\_

4. Երեխայի փաստացի բնակության վայրը (հեռախոսահամարը) \_\_\_\_\_

5. Երեխայի նախասիրությունները և հմտությունները \_\_\_\_\_

6. Երեխայի զարգացման տարիքը \_\_\_\_\_

7. Երեխայի կարիքները՝

1) սոցիալական \_\_\_\_\_

2) հոգեբանական \_\_\_\_\_

3) բժշկական \_\_\_\_\_

4) կրթական \_\_\_\_\_

8. Լրացուցիչ տվյալներ \_\_\_\_\_

9. Երեխայի վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ՝

1) սոցիալական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները	Կատարողը	Ժամկետները	Ակնկալվող արդյունքը

2) հոգեբանական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները	Կատարողը	Ժամկետները	Ակնկալվող արդյունքը

3) բժշկական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները	Կատարողը	Ժամկետները	Ակնկալվող արդյունքը

4) կրթադաստիարակչական գործընթաց (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կազմակերպվում է անհատական ուսումնական պլանի համաձայն)

Միջոցառումը և ծառայությունների տեսակները	Կատարողը	Ժամկետները	Ակնկալվող արդյունքը

Ծրագիրը լրացնողի պաշտոնը, անունը, ազգանունը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

Ստորագրությունը \_\_\_\_\_

Լրացնելու ամսաթիվը \_\_\_\_\_

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**